**Հավելված 5**

**«ԷԱՃԱՊՁԲ  ՀՀ ԱՄ ԹՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/42 »* ծածկագրով**

**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

***ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ***

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ՀՀ ԱՄ ԹՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/42-1**

ք. Երևան   ____/____________/2024թ.

« Թալինի քաղաքապետարան »-ը ի դեմս  Տավրոս Սափեյան ի, որը գործում է « Թալինի քաղաքապետարան »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Մայ Մարկետ ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն  տնօրեն Սևակ Եսայան ի, որը գործում է « Մայ Մարկետ ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են __ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով

ապրանքի բնույթից և նշանակությունից։

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4760220.00 AMD(չորս միլիոն յոթ հարյուր վաթսունհազար երկու հարյուր քսանդրամ ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն:629[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում` հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի

30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում` սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

_

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին։

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված` ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)` նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում

Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] [3][4]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

## 7. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը* [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը։

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**Թալինի քաղաքապետարան**

**ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Թալին, Գայի 1**

**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**

**900462000721**

**05030561**

**--------------------------------**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**Մայ Մարկետ ՍՊԸ**

**ք. Երևան, Սաֆարյան 8/8**

**Ամերիաբանկ ՓԲԸ**

**1570048536910100**

**00184008**

**--------------------------------**

Digitally signed by YESAYAN SEVAK 2505810427
Date: 2024.04.29 11:12:58 AMT

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]*9 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/____________/2024թ. կնքված
ՀՀ ԱՄ ԹՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/42 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ֆիրմայի անվանում* | տեխնիկական բնութագիրը |
| 7 | 30192125/2 | մարկերներ | Sheng Zong, Sheng Zong, Sheng Zong | Գծանշիչ (մարկեր) Fabercastel, կամ համարժեք, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից պատրաստված ծայրով: Ծայրի լայնությունը (0,4 - 0,7) մմ: Նախատեսված է գրավոր տեքստերը, քարտեզները, պլակատային պատկերները գունաերանգով նրբագծելու համար: Կցված է 4edc3eaa.pdf |
| 8 | 30192100/4 | ռետին հասարակ | Sheng Zong, Sheng Zong, Sheng Zong | Ռետինե ջնջոց փափուկ փոքր` նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար : Կցված է b4984467.pdf |
| 9 | 30199430/ | թուղթ | Attache, | Նշումների թերթիկ կպչուն 76x76, 500 թերթ 5 տարբեր գույներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 4 | նշումների, տրցակներ ով | Attache, Attache | յուրաքանչյուր տրցակում Թերթիկի չափսը` 9 սմ x 9 սմ Տրցակի հաստությունը` 9 սմ (500 թերթիկ) Նախատեսված է գրիչով, մատիտով և մարկերով գրելու համար, տարբեր ֆորմայի: Կցված է 0fea39a9.pdf |
| 10 | 37821130/2 | գունավոր մատիտնե ր | Sheng Zong, Sheng Zong, Sheng Zong | Մատիտ գունավոր, սովորական, տուփի մեջ 12 գույն, երկարությունը (13-16) սմ Կցված է 18de6be9.pdf |
| 11 | 30192130/3 | մատիտնե ր | Lapis, Lapis, Lapis | Մատիտ սրած 2 HB Հասարակ, սև գույնի, ռետինե գլխիկով, համապատասխան կարծրությամբ: Կցված է b4ed2676.pdf |
| 12 | 44811200/5 | նկարիչներ ի ներկեր | School, School, School | Ջրաներկ, 12 գույն, պլաստմասե տուփով: • Ջրաներկի տեսակը` մեղրային, կիսաչոր • Ունի վրձին տեղադրելու տեղ (վրձինը ներառված չէ) • Թունավոր նյութեր չի պարունակում • Անվնաս է ըստ նշանակության օգտագործելու համար • Չորանալուց հետո լվացվում է ջրով • Հավաքածուն ներառում է 12 գույն • Յուրաքանչյուր ներկի ծավալը` 2.8 սմ3 Կցված է 5afd59fa.pdf |
| 13 | 30192930/3 | ուղղիչ գրիչներ | Buro, Buro, Buro | Ջնջիչ 20 մլ սրվակով և վրձնով: (շտրիխ) Կցված է 19463727.pdf |
| 16 | 39241210/3 | մկրատ, գր ասենյակա յին | School, School, School | Մկրատ մանկական` 13 սմ երկարությամբ,մկրատի ծայրաը պետք է լինի կլոր կամ բութ: Կցված է dee23742.pdf |
| 17 | 24911500/4 | սոսինձ (աէրոզոլ) | Attache, Attache, Attache | Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար 15գ, պետք է ունենա Fantastic FK-G35S դրոշմանիշը: / կամ համարժեքը Կցված է 7d867b7b.pdf |
| 18 | 30192231/3 | սկոչ | Attache, Attache, Attache | Սկոչ թափանցիկ գրասենյակային, գլանափաթեթված պոլիմերային կպչուն ժապավեն (սկոչ), կպչունությունը` լիարժեք, կպցրած մասերի առանձնացումը բացառելու համար, լայնք 48մմ, երկարություն 36մ: Կցված է 9b29bb44.pdf |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 19 | 30192231/4 | սկոչ | Bolex, Bolex, Bolex | Սքոչ գրասենյակային 38 mic*18 մմ*35 յարդ, սկոչը թափանցիկ, գլանափաթեթված պոլիմերային կպչուն ժապավեն (սկոչ), կպչունությունը՝ լիարժեք, կցրած մասերի առանձնացումը բացառելու համար, Vertex կամ համարժեք. Կցված է 9a6f4290.pdf |
| 20 | 30192230/3 | սկոչ՝ երկկողմանի սոսնձված | Sheng Zong, Sheng Zong, Sheng Zong | Երկկողմանի կպչուն սքոչ 18 մմ x 5 մ Կցված է f48bd984.pdf |
| 21 | 30192739/4 | թուղթ գունավոր, A4 ֆորմատի | Կոլաժ, Կոլաժ, Կոլաժ | Գունավոր թուղթ Թուղթ գունավոր A4, չկավճված թուղթ, տարբեր գույների, տուփի մեջ 12 գույն,երկողմանի գունավորմամբ: Կցված է 26de1162.pdf |
| 22 | 30192739/5 | թուղթ գունավոր, A4 ֆորմատի | Attache, Attache, Attache | Գունավոր թուղթ Հատուկ տպագրելու համար գունավոր թուղթ A4 /210 x297/մմ ձևաչափի որակյալ, տարբեր գույների, տուփի մեջ 10 գույն, երկողմանի գունավորմամբ, 100 հատ: Կցված է eb1dafff.pdf |
| 23 | 37821151/2 | կավիճներ | School, School, School | Գունավոր կավիճ՝ գրելու և նկարելու: Թունավոր նյութեր չի պարունակում, մակերեսը՝ ծածկույթով, փոշու մակարդակը հասցված է նվազագույնի,կավիճի տրամագիծը՝ 9.5 մմ, երկարությունը՝ 80 մմ, ապահովում է սահուն աշխատանք, թողնում է հավասարաչափ հետք,հավաքածուն ներառում է երկուական կանաչ, կապույտ, նարնջագույն, դեղին և վարդագույն կավիճներ: Կցված է bf76b1d6.pdf |
| 24 | 22811130/4 | տետրեր | Notebook, Notebook, Notebook | Ընդհանուր տետր 48 թերթ, ՀՍՏ 323-2010, հավասարաչափ գծավոր (75) և քառակուսի (76): Թերթերի թիվը՝ առնվազն 48: Տետրի կազմը՝ Տետրի կազմը՝ 1 մ2 մակերեսի 150-250 գ զանգվածով թղթից, օգտագործողի տվյալների նշելու դաշտով, թերթերի թուղթը՝ օֆսեթային, 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով, սպիտակ, չափը՝ 140- 165x200-210 մմ,մեջկարված մետաղյա ամրակալով: Կցված է 39cb59e7.pdf |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 25 | 22811130/5 | տետրեր | Notebook, Notebook, Notebook | Ընդհանուր տետր 12 թերթ, ՀՍՏ 323-2010, հավասարաչափ գծավոր (77) և քառակուսի (78): Թերթերի թիվը` առնվազն 12: Տետրի կազմը` տետրակի թղթով, օգտագործողի տվյալների նշելու դաշտով, թերթերի թուղթը` օֆսեթային, 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով, սպիտակ, չափը` 140-165x200-210 մմ, մեջկարված մետաղյա ամրակալով: Կցված է 9a684744.pdf |
| 26 | 30192771/2 | պլաստիլին | School, School, School | Պլաստիլին` տուփի մեջ 5-6 գույն, չափածրարված 60-ից մինչև 100 գ զանգվածով: • Չի պարունակում թունավոր նյութեր • Ձեռքերին չի կպչում • Հավաքածուն ներառում է 6 տարբեր գույներ • Համապատասխանում է խաղալիքների անվտանգության մասին ТР ТС 008/2011 պահանջներին • Հավաքածուն ներառում է պլաստմասե դանակ Կցված է 80707eaf.pdf |
| 27 | 22811130/6 | տետրեր | Sinar, Sinar, Sinar | Աշխատանքային տետր Տետր A4 ֆորմատի, 70 էջ, տողանի,կապույտ կամ սև խիտ,հաստ և ամուր կազմով: Կցված է d0af0096.pdf |
| 28 | 44111419/3 | գուաշ | School, School, School | Գուաշ Նկարչական բնույթի աշխատանքների համար նախատեսված ներկ, հավաքածու 6 գույնից, ապակյա ամանիկներով կամ պլաստմասսայե մածուկաշշիկներով, քանակը 120 մլ, թանձր վիճակում: Կցված է 8669be01.pdf |
| 29 | 30197230/3 | թղթապանակ | Sheng Zong, Sheng Zong, Sheng Zong | Թղթապանակ կոճակով անթափանց Թղթապանակ պլաստիկ, A4 ձևաչափի թերթերի համար, ծրարատիպ, կափույրը կոճգամով ամրացվող: Գունավոր: Կցված է 8e56272d.pdf |
| 30 | 22841100/3 | հավաքածուների ալբոմներ | NoteBook, NoteBook, NoteBook | Նկարչական ալբոմ 48 թերթ: Պատրաստված է օֆսեթ բարձրորակ թղթից: Կցված է 41ce7eb1.pdf |
| 31 | 30192133/3 | սրիչներ | Sheng Zong, Sheng Zong, Sheng Zong | Սրիչ գրաֆիտե մատիտի համար: Կցված է c4bed2a4.pdf |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 33 | 22841100/4 | հավաքածուների ալբոմներ | NoteBook, NoteBook, NoteBook | Ներկիր ինքդ Ներկայացվող ձեռնարկը նպատակ ունի զարգացնելու երեխաների նկարչական ունակությունները: Այս ձեռնարկը գերազանց հիմք կարող է հանդիսանալ ծնողների և երեխաների համատեղ ժամանցը հետաքրքիր և արդյունավետ կազմակերպելու համար: Նախատեսված է նախադպրոցական ուսումնական հաստատության համար 12 էջ: Ապրանքի թեմատիկան համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է 5962f6ba.pdf |
| 34 | 30195100/3 | պլանավորման համար նախատեսված գրատախտակներ կամ պարագաներ | School, School, School | Ծեփատախտակ Պլաստրիլինով ծեփելու համար նախատեսված տախտակ A4 չափի: Կցված է 8694558d.pdf |
| 36 | 30197234/4 | թղթապանակ, կոշտ կազմով | Sheng Zong, Sheng Zong, Sheng Zong | Թղթապանակ ռեգիստր A4 (4 սմ) Թղթապանակ զսպանակով, կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թ ղթերի համար: Ներսում գրպանիկ, դրսի ծալվող մասի վրա գրպանիկ՝ նախատեսված նշումների համար: Կցված է b19388c6.pdf |
| 37 | 30197120/3 | կոճգամներ | Feilu, Feilu, Feilu | Գունավոր մեխիկ, պլաստմասե գլխիկով: Կցված է cf106e8b.pdf |
| 38 | 30141200/2 | հաշվասարք, գրասենյակային | Sheng Zong, Sheng Zong, Sheng Zong | Սեղանի հաշվիչ պլաստիկ ստեղներով: Ունի 14 նիշ, սնուցման 2 աղբյուր՝ արևային և AAմարտկոցով, ավտոմատ և ձեռքով անջատվելու հնարավորություն, տոկոս և արմատ հաշվելու գործառույթներ: Կցված է fc801f3f.pdf |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 39 | 37521120/2 | փազլներ | Sheng Zong,<br>Sheng Zong,<br>Sheng Zong | Փազլ գորգ Փազլ խաղագորգը բաղկացած է 4 մեծ կտորից: Խաղագորգը նախատեսված է փոքրիկների խաղը ավելի հարմարավետ դարձնելու համար: Չափսը՝ 120*120 սմ: 1 կտորի չափսը ՝ 60 սմ: Ապրանքի թեմատիկան համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է 89906cc4.pdf |
| 40 | 18931220/2 | ձեռքի պայուսակներ | Sheng Zong,<br>Sheng Zong,<br>Sheng Zong | Դպրոցական պայուսակ՝ համապատասխան չափերի երկուական դարակներով՝ առանձնացված ամուր շղթայափականներով /ըստ պայուսակի գույնի/: Պայուսակը կարված լինի բարձրորակ, էկոլոգիապես մաքուր, ամուր, խիտ հումքից գործված չթրջվող կտորից, զերծ տարատեսակ քիմիական նյութերի հոտերից: Հիմնական պատի /հետևամաս/ ներսից լինի միջին խորությամբ շղթայափականով գրպան: Երկրաչափական չափսերը՝ 20սմ x35սմx45սմ, վերնամասը լինի կորաձև: Պայուսակի աջ և ձախ կողքերին լինեն բաց գրպաններ, որոնք գլխամասում ունենան ձգելու հարմարություն, շշով հեղուկ տեղադրելու համար: Պայուսակի վրա լինի ձեռքով բռնելու շարժական վերև բարձրացող հարմարավետ բռնակ, ինչպես նաև ուսերին կրելու հնարավորություն՝ ուսագոտիներ: Ուսագոտիներն ունենան հարմարավետ փափուկ ներդիրներ: Միևնույն ժամանակ պայուսակն ունենա ձեռքին հարմարեցված կտորե բռնակ՝ ամուր և փափուկ ներդիրով: Ապրանքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է 620bf8a5.pdf |
| 41 | 30194321/5 | գծագրական թուղթ | ՄՄ,<br>ՄՄ,<br>ՄՄ | Նկարչական թուղթ/գծանկարի/ Նկարչական թուղթ A կարգի. Նկարչական թուղթ/գծանկարի համար/ Ապրանքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է e8ee9635.pdf |
| 42 | 30194321/6 | գծագրական թուղթ | ՄՄ,<br>ՄՄ,<br>ՄՄ | Նկարչական թուղթ/գունանկարի/ Ստանդարտը՝ 7277-77,610*860մմ. Ապրանքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է c92791a8.pdf |
| 43 | 44811200/ | նկարիչներ | Sheng Zong, | Ջրաներկը թափանցիկ ներկանյութ է, հեշտությամբ լուծվում է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 6 | ի ներկեր | Sheng Zong, Sheng Zong | ջրում, աշխատում են թղթի վրա: Ապրանքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է 8c8ec2f5.pdf |
| 44 | 44111419/4 | գուաշ | Sheng Zong, Sheng Zong, Sheng Zong | Գուաշ :Սոսնձի ու հանքային սպիտականերկերի խառնուրդներով ջրի մեջ տրորված-բացված ներկ նկարում են թղթի և մետաքսի վրա: Ապրանքը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Կցված է c4f10256.pdf |
